

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

-2008 յուլիս 1-ին՝ երեքշաբթի, Կանադայի անկախության օրուայ առթիւ, Ռամալա քաղաքի մէջ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 յուլիս 2-ին՝ չորեքշաբթի, Միացեալ Նահանգներու անկախության օրուայ առթիւ, ընդհանուր հիւպատոսի կողմէ՝ հիւպատոսարանի մէջ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 յուլիս 7-ին՝ երկուշաբթի, “Notre Dame” հիւրանոցի մէջ, Յունաց Պատրիարքի կողմէ՝ Լատինաց նախկին Պատրիարք Ամեն. Ս. Միշէլ Սաբահի պատուին տրուած հրաժեշտի ընթրիքին մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 յուլիս 9-ին՝ չորեքշաբթի, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը այցելեց Լատինաց Պատրիարքարան շնորհաւորելու նորանշանակ Պատրիարք Ամեն. Տ. Ժուաղ Թուայ:

-2008 յունիս 13-ին՝ կիրակի, Ֆրանսիայի անկախության տօնի առթիւ “St. Ann” վանքի մէջ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցաւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 յուլիս 14-ին՝ երկուշաբթի, Ֆրանսիայի անկախության տօնի առթիւ ընդհանուր հիւպատոսի կողմէ՝ հիւպատոսարանի մէջ տրուած հիւրասիրութեան մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 յուլիս 20-ին՝ կիրակի, պաշտօնական այցով Իսրայէլ գտնուող Մեծ Բրիտանիոյ վարչապետ Տիար Gordon Brown այցելեց Բերղեհէմի Օննդեան Սբ. Տաճար: Տաճարի մուտքի ան ղիմաւորուեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեանի, Ս. Գուսան Վրդ. Ալճանեանի, Ս. Խաղ Աբդ. ճունտուրեանի, ինչպէս նաեւ յոյն եւ լատին հոգեւորականներու կողմէ:

-2008 օգոստոս 9-ին՝ շաբաթ, Յոյն-կաթողիկէ եկեղեցւոյ նոր Պատրի-

արքական փոխանորդ Ս. Եուսէֆ Եպս. Ժիլի ղիմաւորման արարողութեան մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 օգոստոս 15-ին՝ ուրբաթ, Հնդկաստանի անկախության օրուայ առթիւ, դեսպանի կողմէ՝ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 օգոստոս 22-ին՝ ուրբաթ, ՀՄԸՄ-ի սկաւտներու բանակումի աւարտուելու առթիւ կազմակերպուած դաշտահանդէսին մասնակցեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեան:

-2008 սեպտեմբեր 16-ին՝ երեքշաբթի, իսլամական Ռամադանի տօնի առթիւ, Պաղեստինի նախագահ Տիար Մահմուտ Աբբասի կողմէ Ռամալայի նախագահական ապարանքի մէջ տրուած ընթրիքին մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 սեպտեմբեր 18-ին՝ հինգշաբթի, իսլամական Ռամադանի տօնի առթիւ, “Notre Dame” հիւրանոցի մէջ քրիստոնէայ հոգեւոր պետերու կողմէ իսլամ շէյխերու եւ երեւելիներու տրուած ընթրիքին մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 սեպտեմբեր 21-ին՝ կիրակի, Հայաստանի Հանրապետութեան անկախության օրուայ առթիւ, “Notre Dame” հիւրանոցի մէջ Պատույ Հիւպատոս Տիար Յոլակ Մոմճեանի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Միաբանութեան անդամները:

-2008 սեպտեմբեր 22-ին՝ երկուշաբթի, Միացեալ Ազգերու խաղաղութեան օրուայ առթիւ “Notre Dame” հիւրանոցի մէջ կազմակերպուած արարողութեանը մասնակցեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեան, որը տուաւ նաեւ օրուայ պատգամը:

-2008 սեպտեմբեր 24-ին՝ չորեքշաբթի, հրեական Նոր Տարուայ առթիւ ոստիկանութեան կեդրոնի մէջ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

Նոյն օրը Ուքրանիոյ անկախութեան օրուայ առթիւ, Թել-Ավիւի "Dan Panorama" հիւրանոցի մէջ ընդհանուր դեսպանի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 հոկտեմբեր 1-ին՝ չորեքշաբթի, Ռամալայի նախագահական ապարանքի մէջ՝ Պաղեստինի նախագահ Մահմուտ Աբբասին իսլամական Ռամադանի տօնը շնորհաւորելու արարողութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 հոկտեմբեր 14-ին՝ երեքշաբթի, Սպանիոյ անկախութեան օրուայ առթիւ հիւպատոսարանի մէջ Սպանիոյ հիւպատոսի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Կորին Աբդ. Բաղդասարեան:

-2008 հոկտեմբեր 24-ին՝ ուրբաթ, Հունգարիոյ Յեղափոխութեան տարեդարձի առթիւ, Բեթղեհեմի "Խաղաղութեան Կեդրոն"-ի մէջ Հունգարիոյ ներկայացուցչի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, Ս. Խաղ Աբդ. Ճունտուրեան եւ Ս. Կորին Աբդ. Բաղդասարեան:

-2008 հոկտեմբեր 27-ին՝ երկուշաբթի, Քնեսեթի աշնանային նստաշրջանի բացմանը մասնակցեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեան:

-2008 հոկտեմբեր 30-ին՝ հինգշաբթի, Թուրքիոյ անկախութեան օրուայ առթիւ, հիւպատոսարանի մէջ հիւպատոսի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

-2008 հոկտեմբեր 31-ին՝ ուրբաթ, "Բարեփոխման Օրուայ" առթիւ, Լուտերական եկեղեցոյ մէջ կամակերպուած յատուկ արարողութեան եւ անկէ վերջ տրուած հիւրասիրութեան մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Կորին Աբդ. Բաղդասարեան:

-2008 նոյեմբեր 28-ին՝ ուրբաթ, ՀՕՄ-ի տարեկան պագարի բացմանը մասնակցեցան Սիաբաւութեան անդամները գլխաւորութեամբ Լուսարարապետ Ս. Նուրհան Արք. Մանուկեանի:

-2008 դեկտեմբեր 1-ին՝ երկուշաբթի, քրիստոնէական Նոր Տարուայ առթիւ, Քնեսեթի մէջ կազմակերպուած ընդունելութեան մասնակցեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեան:

Նոյն օրը՝ երեկոյեան, Ռումանիոյ անկախութեան օրուայ առթիւ, դեսպանի կողմէ տրուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 դեկտեմբեր 6-ին՝ շաբաթ, Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ Պատրիարք Ս. Ալեքսի Բ.ի մահուան առթիւ, Երուսաղէմի Ռուսական եկեղեցի ցաւակցական այցի գացին Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 դեկտեմբեր 15-ին՝ երկուշաբթի, Երուսաղէմի նախկին քաղաքապետ Տիար Ուրի Լուբովիսկիի պատուին կազմակերպուած հրաժեշտի հանդիսութեանը եւ հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան:

-2008 դեկտեմբեր 24-ին՝ չորեքշաբթի, Երուսաղէմի նորընտիր քաղաքապետ Տիար Նիր Պարգաթի պաշտօնի ստանձնման եւ քրիստոնէական Նոր Տարուայ առթիւ, քաղաքապետարանի կողմէ կազմակերպուած հիւրասիրութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, Ս. Գուսան Վրդ. Ալճանեան եւ Ս. Բահակ Աբդ. Միւնասեան:

-2008 դեկտեմբեր 29-ին՝ երկուշաբթի, Իսրայէլի նախագահ Շիմօն Պերէսի կողմէ քրիստոնէական Նոր Տարուայ առթիւ, քրիստոնէայ կրօնական պետերուն տրուած հիւրասիրութեանը Հայոց Պատրիարքարանի կողմէ մասնակցեցան Ս. Նուրհան Արք. Մանուկեան, Ս. Սեւան Արք. Ղարիպեան եւ Ս. Գուսան Վրդ. Ալճանեան: